25 դեկտեմբերի 2017 թ. N 329-Ա

ք. Ստեփանակերտ

## 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ 2017 թվականին Արցախի Հանրապետության Ասկերանի, Հադրութի, Մարտունու և Քաշաթաղի շրջանների (այսուհետ՝ շրջաններ) մի շարք համայնքների վարչական սահմաններում գտնվող՝ կարկտահարության հետևանքով 50-100 տոկոսի չափով վնաս կրած հողօգտագործողների հողատարածքների՝ 2017 թվականի համար հաշվարկված և համայնքների բյուջե վճարման ենթակա հողի հարկի և վարձակալության վճարների գումարները՝ այդ վճարները կատարող հողօգտագործողների փոխարեն ենթակա են վճարման պետական բյուջեի միջոցների հաշվին ըստ համայնքների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշման 1-ին կետով նախատեսված պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից N 1 հավելվածում նշված համայնքներին հատկացնել 12 766 727 (տասներկու միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար յոթ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 489100 «Պահուստային միջոցներ» հոդվածով):

3. Սահմանել, որ 2017 թվականին Արցախի Հանրապետության Ասկերանի, Հադրութի և Մարտունու շրջանների (այսուհետ՝ համապատասխան շրջաններ) մի շարք համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողատարածքների՝ կարկտահարության հետևանքով 50-100 տոկոսի չափով վնաս կրած հողօգտագործողներն ազատվում են 2017 թվականի համար հաշվարկված ու պետական բյուջե վճարման ենթակա հողերի վարձակալության վճարներից՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման 3-րդ կետով սահմանված հողօգտագործողների կողմից՝ 2017 թվականի համար հաշվարկված հողերի վարձակալության վճարները պետական բյուջե վճարված լինելու դեպքում այդ վճարները վերագրվում են հետագա ժամանակաշրջաններում առաջացող պարտավորություններին, իսկ հողերի վարձակալության լուծված պայմանագրերի մասով ենթակա են փոխանցման (տրամադրման) համապատասխան հողօգտագործողներին:

5. Սույն որոշման 4-րդ կետի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը դնել համապատասխան շրջանների վարչակազմերի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ** **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 25 -ի N329-Ա որոշման

**Ց Ու Ց Ա Կ**
**2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 50-100 ՏՈԿՈՍԻ ՉԱՓՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ (ԿԱՄ) ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ**

| ՀՀ | Համայնքը | Սեփականաշնորհված հողեր | | Վարձակալական հողեր | | Ընդհանուր | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Տուժած տարածքը (հա) | Գումար (ՀՀ դրամ) | Տուժած տարածքը (հա) | Գումար (ՀՀ դրամ) | Տուժած տարածքը (հա) | Գումար (ՀՀ դրամ) |
| | **Ասկերանի շրջան** | **451,73** | **1 363 951** | **166,38** | **1 276 070** | **618,11** | **2 640 021** |
| | *այդ թվում՝* | | | | | | |
| 1 | Ասկերան | 3,29 | 13 500 | | | **3,29** | **13 500** |
| 2 | Ակնաղբյուր | 108,43 | 271 075 | 4,57 | 35 560 | **113** | **306 635** |
| 3 | Այգեստան | 17,52 | 35 040 | 1 | 8 000 | **18,52** | **43 040** |
| 4 | Ավետարանոց | 2 | 9 800 | | | **2** | **9 800** |
| 5 | Խաչեն | 3,8 | 9 500 | 6,7 | 47 360 | **10,5** | **56 860** |
| 6 | Խնածախ | 4 | 10 000 | | | **4** | **10 000** |
| 7 | Խնապատ | 112,34 | 280 850 | 10,1 | 80 800 | **122,44** | **361 650** |
| 8 | Խնձրիստան | 19,8 | 39 010 | | | **19,8** | **39 010** |
| 9 | Խրամորթ | 9,8 | 37 300 | 15,7 | 174 480 | **25,5** | **211 780** |
| 10 | Ծաղկաշատ | 1 | 2 500 | 1 | 8 000 | **2** | **10 500** |
| 11 | Հարավ | 40 | 139 090 | | | **40** | **139 090** |
| 12 | Մադաթաշեն | | | 9,5 | 66 500 | **9,5** | **66 500** |
| 13 | Նախիջևանիկ | | | 3,71 | 22 000 | **3,71** | **22 000** |
| 14 | Շոշ | | | 80 | 486 400 | **80** | **486 400** |
| 15 | Ջրաղացներ | 11,55 | 47 355 | | | **11,55** | **47 355** |
| 16 | Սառնաղբյուր | 19,1 | 86 141 | 1,6 | 21 260 | **20,7** | **107 401** |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 17 | Սարուշեն | 93,1 | 358 190 | 9 | 60 210 | ***102,1*** | ***418 400*** |
| 18 | Ուղտասար | 6 | 24 600 | 23,5 | 265 500 | ***29,5*** | ***290 100*** |
| | ***Հադրութի շրջան*** | ***167,3*** | ***444 479,4*** | ***46*** | ***374 248*** | ***213,34*** | ***818 727,4*** |
| | *այդ թվում՝* | | | | | | |
| 1 | Ազոխ | 3 | 7 980 | | | ***3*** | ***7 980*** |
| 2 | Դրախտիկ | 21,1 | 48 319 | 4 | 25648 | ***25,1*** | ***73 967*** |
| 3 | Մեծ Թաղեր | 143,2 | 388 180,4 | 42 | 348 600 | ***185,2*** | ***736 780,4*** |
| | ***Մարտունու շրջան*** | ***829,13*** | ***2 845 986,4*** | ***347,32*** | ***2 489 928*** | ***1176,45*** | ***5 335 914,4*** |
| | *այդ թվում՝* | | | | | | |
| 1 | Աշան | 24,75 | 73 332 | | | ***24,75*** | ***73 332*** |
| 2 | Բերդաշեն | | | 8,5 | 74 800 | ***8,5*** | ***74 800*** |
| 3 | Կ. Չուլա | 18,911 | 79 532 | 0,1 | 11 070 | ***19,011*** | ***90 602*** |
| 4 | Հացի | 14,42 | 46 130 | 16.71 | 70 115 | ***31,13*** | ***116 245*** |
| 5 | Հերհեր | 34,4 | 141 040 | | | ***34,4*** | ***141 040*** |
| 6 | Ճարտար | 242,04 | 685 100 | 38,6 | 267 870 | ***280,64*** | ***952 970*** |
| 7 | Մաճկալաշեն | 205,03 | 809 490 | 48,06 | 429 707 | ***253,09*** | ***1 239 197*** |
| 8 | Ննգի | 2,7 | 9 180 | | | ***2,7*** | ***9 180*** |
| 9 | Նորշեն | 80,11 | 282 770 | | | ***80,11*** | ***282 770*** |
| 10 | Ջիվանի | 17,67 | 37 460 | 106,1 | 860 765 | ***123,77*** | ***898 225*** |
| 11 | Սարգսաշեն | 1, | 3 670 | | | ***1*** | ***3 670*** |
| 12 | Սոս | 184,1 | 668 282,4 | 129,25 | 775 601 | ***313,35*** | ***1 443 883,4*** |
| 13 | Վազգենաշեն | 4 | 10 000 | | | ***4*** | ***10 000*** |
| | ***Քաշաթաղի շրջան*** | ***145,73*** | ***273 243,75*** | ***616,5*** | ***3 698 820*** | ***762,2*** | ***3 972 063,75*** |
| | *այդ թվում՝* | | | | | | |
| 1 | Աղավնատուն | | | 68 | 408 000 | ***68,0*** | ***408 000*** |
| 2 | Ծաղկաբերդ | 145,73 | 273 243,75 | 548,47 | 3 290 820 | ***694,2*** | ***3 564 063,75*** |
| | ***ԸՆԴՀԱՆՈՒՐԸ*** | ***1593,93*** | ***4 927 660,55*** | ***1 176,17*** | ***7 839 066*** | ***2 770,1*** | ***12 766 726,55*** |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 25-ի N329-Ա որոշման

**Ց ՈՒ Ց Ա Կ**
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԿԵՐԱՆԻ, ՀԱԴՐՈՒԹԻ ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆՆԵՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ) ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 50-100 ՏՈԿՈՍԻ ՉԱՓՈՎ ՎՆԱՍ ԿՐԱԾ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ**

| Հ/հ | Հողափիրոջ անունը, ազգանունը, հայրանունը | Տարածքը (հա) | Գումար (ՀՀդրամ) |
|---|---|---|---|
| **ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ** | | | |
| 1 | Գրիգորյան Ալեքսանդր Սերգեյի | 13 | 78 000 |
| 2 | Հայրապետյան Վլադիմիր Գրիգորիի | 4 | 24 000 |
| 3 | Հովսեփյան Պավել Ֆրեյդումի | 7 | 42 000 |
| 4 | Գալստյան Արամ Արմենի | 8 | 48 000 |
| 5 | Զաքարյան Սաղաթել Վանյայի | 1 | 6 000 |
| 6 | Ենգիբարյան Լևոն Ամերիկոյի | 14 | 84 000 |
| 7 | Անդրյան Արմեն Վանյայի | 2 | 12 000 |
| 8 | Գասպարյան Արմեն Վանյայի | 1,3 | 7 800 |
| 9 | Հովհաննիսյան Արթուր Էդիկի | 8,5 | 51 000 |
| 10 | Հովհաննիսյան Աշոտ Էդիկի | 4 | 24 000 |
| 11 | Գասպարյան Վոլոդյա Այոշայի | 4 | 24 000 |
| 12 | Ասրյան Սասուն Էդուարդի | 6 | 36 000 |
| 13 | Հակոբյան Սամվել Ազիզբեկի | 2 | 12 000 |
| 14 | Գաբրիելյան Արա Խորենի | 23,5 | 141 000 |
| 15 | Ավշառյան Հարութ Մխիթարի | 5,42 | 32 520 |
| 16 | Գասպարյան Վանյա Գրիգորիի | 1,3 | 7 800 |
| **Ընդամենը** | | **105,02** | **630 120** |
| **ՀԱԴՐՈՒԹԻ ՇՐՋԱՆ** | | | |
| 1 | Հայրյան Լևոն Արտաշեսի | 27,5 | 165 000 |
| 2 | Բեջանյան Նովիկ Ղարիբի | 4 | 24 000 |
| 3 | Դավթյան Յուրիկ Աղավումի | 3 | 18 000 |
| 4 | Մեսրոպյան Վանյա Սամվելի | 3 | 18 000 |
| 5 | Գևորգյան Վրեժ Հայասերի | 3 | 18 000 |
| 6 | Ղուլյան Սուսաննա Ալեքսեյի | 8 | 48 000 |
| 7 | Տոնյան Արմեն Յաշայի | 4 | 24 000 |
| 8 | Ավանեսյան Իմրան Սուրենի | 2,5 | 15 000 |

| | | | |
|---|---|---|---|
| **9** | Տոնյան Սերժիկ Բորիկի | 4 | 24 000 |
| ***Ընդամենը*** | | ***59*** | ***354 000*** |
| ***ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ*** | | | |
| **1** | Քամալյան Մելսիկ Սաշայի | 1 | 6 000 |
| **2** | Սահակյան Սուրեն Հարությունի | 4,3 | 25 800 |
| **3** | Հարությունյան Ժասմեն Ենովքի | 2,5 | 15 000 |
| **4** | Հարությունյան Սլավիկ | 0,9 | 5 400 |
| **5** | Սահակյան Միհեր Սուրենի | 2,5 | 15 000 |
| **6** | Պետրոսյան Օֆելյա Միքայելի | 11,5 | 69 000 |
| **7** | Ավետիսյան Կառլեն Սամվելի | 0,8 | 4 800 |
| **8** | Դաշյան Միշա Սանջանի | 5 | 31 500 |
| **9** | Պետրոսյան Խաչատուր Արամի | 2 | 12 000 |
| **10** | Ղևոնդյան Նահապետ Ռուդիկի | 4 | 24 000 |
| **11** | Հայրապետյան Բորիկ Արտյուշայի | 3 | 18 000 |
| **12** | Ավետիսյան Դմիտրի Գրիգորիի | 2,5 | 15 000 |
| **13** | Մանգասարյան Մավրիկ Սոկրատի | 5 | 31 500 |
| **14** | Հայրապետյան Ռաֆիկ Ներսեսի | 5 | 30 000 |
| **15** | Հարությունյան Սամսոն Սերգեյի | 4 | 24 000 |
| ***Ընդամենը*** | | ***54*** | ***327 000*** |
| ***Ընդհանուրը*** | | ***218,02*** | ***1 311 120*** |

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**